ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

17.07.15 N 14/15/2328-15
Ձեր N

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱՎԱԲԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հուլիսի 9-ի թիվ 252-ի 6 գրության հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2012-2014թթ. ընթացքում իրականացվել են դրամաշնորհային ծրագրեր՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի (այսուհետ՝ Գլոբալ հիմնադրամ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (այսուհետ՝ ԱՄՆ ՄԶԳ) օժանդակությամբ:

Գլոբալ հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվում են «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» և «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրերը:

Ստորև ներկայացվում է Գլոբալ հիմնադրամից ստացված դրամաշնորհների չափն ըստ իրականացված ծրագրերի և տարիների.

Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրեր	2012 (ԱՄՆ դոլար)	2013 (ԱՄՆ դոլար)	2014 (ԱՄՆ դոլար)
Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում	**2.672.032**	**3.932.064**	**1.620.461**
Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն	**1.671.289**	**2.256.413**	**1.839.284**
Առողջապահական համակարգի հզորացում *	**778.319**	**466.208**	**60.462**

*«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի 2012 թվականի ֆինասավորումը ստացվել է 2011 թվականի ընթացքում՝ ընդգրկելով 2011-2012 թվականները:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվել է «Աջակցություն շտապ բուժօգնության ծառայություններին» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում 2012-2014թթ. ընթացքում ստացված դրամաշնորհի չափը կազմել է 495.240 ԱՄՆ դոլար: Հարկ է նշել, որ գումարը տրամադրվել է միանվագ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԱՆ Գլոբալ հիմնադրամի
ծրագրերը համակարգող խումբ
Հեռ. 543650, 543651